«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ք.Երևան 375012 Բուզանդի 1/4
Հեռ.54-17-89,54-51-89
«Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100 ՀՎՀՀ 02504913

68/ N 1444

«10» 12 2019թ.

«ԿԱՐԵՆՕԻԼ» ՍՊԸ-ի ՏՆՕԵՐՆ
ՊԱՐՈՆ Հ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մկրտչյան,

«Երքաղլուս» ՓԲԸ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ և «Կարենօիլ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Մատակարար/ միջև 2019 թվականի մարտի 26-ին կնքված N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-19/4»-1 ծածկագրով՝ Ապրանքների մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետով սահմանված /թիվ 1 հավելված/ ժամկետում և տեխնիկական բնութագրին համաձայն, մասնավորապես 2-րդ և 5-րդ չափաբաժնով նախատեսված՝ Մատակարարը պարտավոր էր մատակարարել 200 լիտր շարժիչի յուղ ձմեռային «10W 40» և 200 լիտր հիդրավլիկ յուղ ապրանքատեսակները, այն է՝ մատակարարումն իրականացնել հայտը տալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ըստ որի Պատվիրատուի ապրանքագետի էլեկտրոնային փոստի /qaxluis@mail.ru/ միջոցով, Մատակարարի պայմանագրում նշված էլեկտրոնային փոստին /karenoilsp@gmail.com/ 2019 թ.-ի նոյեմբերի 21-ին ուղարկվել է մատակարարման հայտը-նախազգուշացումը՝ վերոհիշյալ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, սահմանված ժամկետում մատակարարելու և պարտավորությունները պատշաճ կատարվելու վերաբերյալ, ինչպես նաև մինչ այդ երեք անգամ հեռախոսազանգի միջոցով նույնպես ներկայացվել էր մատակարարման հայտը՝ հիմք ընդունելով Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված նաև բանավոր ձևը:

«Երքաղլուս» ՓԲԸ-ի 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 68 / 1380 գրությամբ Մատակարարը զգուշացվել է, որ Պայմանագրով ստանձնած 2-րդ և 5-րդ չափաբաժնի մասով պարտավորությունները չկատարելու դեպքում, Պատվիրատուն նշված չափաբաժինների մասով միակողմանի հրաժարվելու է հիշյալ Պայմանագրից:

Հիշեցնում եմ նաև, որ Պայմանագրով սահմանված ժամկետում 2-րդ և 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքները Ձեր կողմից չեն մատակարարվել, հետևաբար խախտվել է Պայմանագրով սահմանված էական պայմանները, ուստի.

ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345 հոդվածի 1-ին մասով, 466 հոդվածի 3-րդ մասով, Պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերով, 2-րդ և 5-րդ չափաբաժնի մասով «Երքաղլույս» ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվում է Մատակարարի հետ կնքված N «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-19/4»-1 պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և,

պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Մատակարարը պարտավոր է ողջամիտ ժամկետում վճարել 2-րդ և 5-րդ չափաբաժնի մասով Պայմանագրի կատարման ապահովումը, այն է՝ 62.192 ՀՀ դրամ և Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով սահմանված, որպես տույժ 1390՝ ՀՀ դրամ և տուգանք՝ 1985 ՀՀ դրամ, որը հաշվանցվելու է Պատվիրատուի և Մատակարարի միջև առկա պայմանագրային գումարից:

Տեղեկացնում եմ նաև, որ Պայմանագրի 2.1.6 կետի համաձայն, «Երքաղլույս» ՓԲԸ-ն պահանջելու է հատուցել այն վնասները, որը կարող է առաջանալ Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ապրանք ձեռք բերելու ժամանակ՝ Պայմանագրով սահմանված գնի համեմատ առաջացող դրական տարբերության մասով:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ,
ՏՆՕՐԵՆԻ 1-ին ՏԵՂԱԿԱԼ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող Ա. Անանյան
010. 54- 39- 80